ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ապրիլի 2015թ. **N___-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 10-ի հ.270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Սիսակյան փողոցի հ.22 շենքի հ. 45՝ 75.9 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15052013-01-0049 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Հովհաննես Ներսեսյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Սիսակյան փողոցի հ. 22 շենքի հ. 45՝ 75.9 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15052013-01-0049 վկայական) անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Հովհաննես Ներսեսյանին։

Որոշման նախագծի նախապատրաստման համար հիմք է հանդիսացել Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տեր Նավասարդ Արքեպիսկոպոս Կճոյանի միջնորդագիրը՝ Հովհաննես սարկավագ Ներսեսյանին բնակարան տրամադրելու վերաբերյալ։

Հովհաննես սարկավագ Ներսեսյանը 2009 թվականից հոգևոր ծառայություն է մատուցում Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցում։ Երկար տարիներ ծառայելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում՝ Հովհաննես սարկավագը մեծ ներդրում ունի հոգևոր երգեցողության տարածման գործում ոչ միայն հայրենիքում, այլև հայրենիքի սահմաններից դուրս՝ բարձր պահելով հայ հոգևոր և ազգային երգեցողության արվեստը։ Հովհաննես Ներսեսյանը իր գործունեությամբ օրինակ է ծառայում երիտասարդ սերնդի հոգևոր կրթության և դաստիրակության գործում։ Իրականացրել է դպրական պատրաստության դասընթացներ Տիրախնամ թեմի եկեղեցիներում ծառայող երիտասարդների և պատանիների համար։ Հովհաննես Ներսեսյանը 2014 թվականից աշխատում է Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում՝ որպես մենակատար։ Համերգային ծրագրով հանդես է եկել Հայաստանի Հանրապետությունում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում՝ արժանանալով պետական և միջազգային մրցանակների։ Դասական երաժշտության բնագավառում՝ «Երգեցողություն» անվանակարգում 2013 թվականին Հովհաննես Ներսեսյանը արժանացել է ՀՀ Նախագահի երիտասարդական մրցանակի և ոսկե մեդալի։ Ռուսաստանի Դաշնության Տիխվին քաղաքում անցկացված Ն.Ա.Ռիմսկի-Կորսակովի անվան երիտասարդ օպերային երգիչների 9-րդ միջազգային մրցույթում արժանացել է առաջին մրցանակի։

Հովհաննես սարկավագ Ներսեսյանը այն բացառիկ նվիրյալներից է, ով Հայ Առաքելական Եկեղեցու գաղափարները և դավանությունը տարածում է հայ երիտասարդների շրջանում, սրբազան ավանդությունների համաձայն հային կրթելու և նրանց մեջ բարոյական, հայրենասիրական ոգի և մայր եկեղեցու արժեքների մեջ գիտակցություն սերմանելու համար, ինչը կարևորագույն դեր և նշանակություն ունի ազգային գաղափարախոսության պահպանման և զարգացման գործում։

Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև Հովհաննես Ներսեսյանի ընտանիքի բնակարանային պայմանների բարելավման խիստ անհրաժեշտությունը, մշակվել է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ